ՄԱՐԻԱ ԲՈՒՆԱԹՅԱՆ
ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն:
Պայմանագրային սոցիալական աշխատող

ԱՆԱՀԻՏ ՋԻՋՅԱՆ
ՀՊՄՀ Սոցիոլոգիայի և սոցիալական
աշխատանքի ամբիոնի դոցենտ, փ.գ.թ.

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԻՐԱՎԱԽԱՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Այս հոդվածում ուսումնասիրվում են անչափահասների իրավախախտումների կանխարգելման և սոցիալական վերականգնման հիմնախնդիրները Հայաստանում: Հետազոտության նպատակն է բացահայտել անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման և անչափահաս իրավախախտների սոցիալական վերականգնմանն ուղղված միջոցառումները և դրանց իրականացման ընթացքում առաջացող խնդիրները:

Մեթոդաբանական հիմքում դրված է համակցված մոտեցում՝ վիճակագրական տվյալների վերլուծություն, փորձագիտական հարցազրույցներ և հարցաթերթիկային հարցումներ: Տվյալները ստացվել են պաշտոնական վիճակագրությունից, ինչպես նաև պրակտիկ աշխատողների և քաղաքականություն մշակողների հետ հարցազրույցներից:

Արդյունքները ցույց են տալիս, որ անչափահասների իրավախախտումների հիմնական պատճառներն են՝ ընտանեկան անտեսումը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, կրթական հնարավորությունների սահմանափակումը և համայնքային աջակցության պակասը, քրեական ենթամշակույթի ռոմանտիզացիան: Միևնույն ժամանակ, կարևորվում են համալիր սոցիալական ծրագրերը, կրթական և մշակութային նախաձեռնությունները, ինչպես նաև ընտանիքի և համայնքի դերակատարումը կանխարգելման ու վերականգնման գործընթացում:

Եզրակացվում է, որ անչափահասների իրավախախտումների արդյունավետ կանխարգելումը հնարավոր է միայն համակարգային համագործակցության պայմաններում՝ համադրելով կրթական, սոցիալական, հոգեբանական և իրավական միջամտությունները:

Հիմնաբառեր- Հայաստան, անչափահասների իրավախախտումներ, կանխարգելում, սոցիալական վերականգնում, սոցիալական աջակցություն, միջգերատեսչական համագործակցություն:

Ներածություն

Անչափահասների իրավախախտումները համարվում են ժամանակակից հասարակության սոցիալական ամենախնդրահարույց երևույթներից մեկը: Դրանք ոչ միայն բացասաբար են անդրադառնում անչափահասների կյանքի որակի և ապագա հնարավորությունների վրա, այլև վտանգ են ներկայացնում հասարակության սոցիալական կայունության համար: Խնդրի կանխարգելումն ու անչափահաս իրավախախտների սոցիալական վերականգնումը պահանջում են համալիր մոտեցում և պետական ու հասարակական կառույցների համագործակցություն:

Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների ՀՀ-ում գրանցված հանցագործությունների քանակը 2018 թ.-ի համեմատ 2023 թ.-ին ավելացել են 1,6 անգամ (2018 թ.-ին՝ 24 678, 2019թ.-ին՝ 26 850, 2020թ.-ին՝ 26 468, 2021թ.-ին՝ 30 245, 2022 թ.-ին՝ 37 612, 2023 թ.-ին՝ 40 666 մարդ):

2022 թվականին անչափահասների կողմից կամ մասնակցությամբ գրանցված հանցագործությունների քանակը մեր երկրում կազմել է 245, որից 100-ը ք. Երևանում, իսկ 2023 թվականին՝ 273, որից 105-ը ք.Երևանում[3]:

Այս համատեքստում կարևոր է ոչ միայն բացահայտել անչափահասների իրավախախտումների առաջացման պատճառները, այլև ուսումնասիրել կիրառվող կանխարգելիչ և վերականգնող միջոցառումները:

Հետազոտության նպատակն է վերլուծել ան-

www.ardaradatutyunjournal.com

չափահասների իրավախախտումների կանխարգելման և սոցիալական վերականգնմանն ուղղված միջոցառումները Հայաստանում՝ առանձնացնելով դրանց իրականացման ընթացքում առաջացող հիմնական խնդիրները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում դրված է համակցված մոտեցում: Օգտագործվել են վիճակագրական տվյալների վերլուծություն, փորձագիտական հարցազրույցներ և հարցաթերթիկային հարցումներ: Վիճակագրական տվյալները ստացվել են պաշտոնական աղբյուրներից, ներառյալ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն: Հարցազրույցները կատարվել են պրակտիկ ոլորտի մասնագետների և քաղաքականություն մշակողների հետ՝ պարզելու իրավախախտումների կանխարգելման և վերականգնման գործող մեխանիզմների արդյունավետությունը: Հարցաթերթիկային հարցումները անցկացվել են նպատակաուղղված կերպով ընտրված համայնքներում՝ պատահական քայլով ընտրված անձանց շրջանում՝ պարզելու վերջիններիս վերաբերմունքը անչափահաս իրավախախտների, նրանց սոցիալական վերականգնման և հասարակության դերի՝ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման և սոցիալական վերականգնման գործում:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Անչափահասների իրավախախտումները դիտվում են որպես դնիանտ վարքագծի ձև, որի պատճառները բազմաշերտ են և պայմանավորված են ինչպես անհատական, այնպես էլ սոցիալ-միջավայրային գործոններով: Գիտական գրականության մեջ առանձնացվում են մի շարք մոտեցումներ. հոգեբանական դպրոցը կարևորում է անձի զարգացումն ու հուզական կայունությունը, սոցիոլոգիական դպրոցը սոցիալական միջավայրի և հարաբերությունների դերը, իսկ իրավական դպրոցը՝ պատժի և վերահսկողության մեխանիզմները:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ անչափահասների իրավախախտումների կանխարգելման արդյունավետ միջոցները ներառում են [5, էջ 100]՝

- ընտանիքի և դպրոցի համատեղ աշխատանք,
- համայնքային աջակցություն,
- զբաղվածության և ժամանցի կազմակերպում,
- սոցիալական և հոգեբանական ծառայությունների հասանելիություն:

Հայաստանում թեման ուսումնասիրվել է թե՛ իրավաբանական, թե՛ սոցիալական գիտությունների շրջանակում: Հետազոտությունները փաստում են, որ անչափահասների հակասոցիալական վարքագծի հիմնական գործոններն են ընտանեկան անտեսումը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, կրթական սահմանափակումները և համայնքային աջակցության պակասը: Միևնույն ժամանակ, կարևորվում է համակարգային մոտեցումը, որտեղ կրթական, սոցիալական, հոգեբանական և իրավական միջամտությունները փոխլրացնում են միմյանց:

Գծապատկեր 1.

Անչափահաս դատապարտվածների թվաքանակն, ըստ տարիքային խմբերի և ըստ տարիների

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ ԱՆ և ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները. 2017 թվականից հետո նկատվում է անչափահաս դատապարտվածների թվի նվազում, ինչը պայմանավորված է արդարադատության ոլորտում պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության կենցեպտին անցմամբ: Սակայն, ըստ փորձագետների, սա չի նշանակում, որ անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների թիվը նվազել է. ընդհակառակը, ներկայումս հատկապես թմրանյութերի շրջանառության հետ կապված հաշվառված անչափահասների թիվը զգալիորեն աճել է: Այս փոփոխությունը վկայում է ոչ թե հանցավորության կրճատման, այլ դատական պատժի մեխանիզմների վերանայման մասին:

Գծապատկեր 2.

Թմրանյութերի հետ կապված հանցագործություններ կատարած դատապարտվածների թվաքանակն, ըստ տարիքային խմբերի և ըստ տարիների



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից՝ 2010 թվականի համեմատությամբ թմրանյութերի շրջանառությամբ պայմանավորված դատապարտվածների թիվը զգալիորեն նվազել է 626-ից դառնալով 278-ի: 2022 թվականի դրությամբ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների 14-17 տարեկանների շրջանում արձանագրվել է 3 դատապարտված անձ, սակայն իրավական և կրթական ոլորտի փորձագետները նշում են, որ անչափահասների շրջանում թմրամիջոցների օգտագործման, շրջանառության դեպքերի զգալի աճել են:

Անչափահասների հանցավորության կանխարգելման արդյունավետ միջոցառումները պահանջում են համալիր մոտեցում, որը ընդգրկում է ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալական և կրթական ասպեկտներ:

Փորձագետի խոսքից տիպական մեջբերում. «Որպես հաջողված օրինակ կարելի է նշել «Հանդիպում օրենքի հետ» ծրագրերը, որոնք իրականացվում են որոշ դպրոցներում, երբ իրավապահ մարմինների ներկայացուցիչները զրույցներ են ունենում աշակերտների հետ, բացատրում են պատիժների կարևորությունը և իրավական հետևանքները»:

Երկրորդ կարևոր կանխարգելիչ միջոցառումը, որին անդրադարձան փորձագետները, ռիսկային խմբի երեխաների վաղ հայտնաբերումն է: Նման երեխաներին կարևոր է վաղ շրջանում ճանաչել, որպեսզի նրանց համար ստեղծվեն համապատասխան աջակցության ծրագրեր, որոնք կնպաստեն նրանց սոցիալական վերականգնմանը: Օրինակ, որոշ երկրներում կիրառվում են «Երկրորդ հնարավորություն» ծրագրերը, որոնք ներառում են անչափահասներին վերականգնողական մոտեցմամբ օգնելու ծրագրեր՝ առանց խիստ պատժամիջոցների կիրառման: Այսպիսով, երեխային հնարավոր է վերաինտեգրել հասարակություն՝ ապահովելով նրան կրթական ու սոցիալական աջակցությամբ:

Հաջող կանխարգելման միջոցառումների կիրառման կարևոր պայմաններից մեկը համակարգված աշխատանքի իրականացումն է՝ տարբեր կառույցների միջև: Ոստիկանության, դպրոցների, սոցիալական ծառայությունների և հասարակական կազմակերպությունների համագործակցության պայմաններում ռիսկի խմբի երեխաներին հնարավոր է արդյունավետ աջակցություն ցուցաբերել: Այսպիսի համատեղ աշխատանքը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել յուրաքանչյուր երեխայի դեպքը՝ այնուհետև համապատասխան քայլեր ձեռնարկել:

Գծապատկեր 3.

Անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման համարառավել արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներն ըստ հարցվողների



Հարցաթերթիկային հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողները անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման համար ամենաարդյունավետ միջոցառումը համարում են ընտանեկան աջակցման ծրագրերի իրականացումը, որը ներառում է սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն ծնողների համար (23,5%): Սա վկայում է այն մասին, որ հարցվողները ընտանիքը տեսնում են որպես երեխայի վարքագծի ձևավորման հիմնական գործոն:

Ըստ փորձագետների Հայաստանում անչափահաս իրավախախտների սոցիալական վերականգնման գործընթացը բախվում է մի շարք փոխկապակցված սոցիալական, հոգեբանական և կրթական խոչընդոտների:

Պետական կառույցների գործունեությունը անչափահասների սոցիալական վերականգնման հարցում Հայաստանում ընդհանուր առմամբ բավականին խնդիրներ ունի, սակայն նաև որոշակի հաջողություններ և փորձառություն կարելի է նկատել:

2016 թվականին ՀՀ-ում Պրոբացիոն ծառայության ձևավորմամբ պայմանավորված պատժողական քաղաքականությունից անցում կատարվեց վերականգնողական արդարադատության, որի շրջանակներում կարևորվում է իրավախախտում կատարած անձի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, իրավագիտակցության բարձրացումը և զբաղվածության ապահովումը հենց համայնքում: Դրա արդյունքում այս պահին քրեակատարողական հիմնարկներում իրենց պատիժը կրում են 5 անչափահասներ: Պետությունը կարևորում է անչափահասի անցնցում վերասոցիալականացումը, սակայն առավելապես վերասոցիալականացման աշխատանքներն իրականացվում են, երբ անչափահասը ինչ որ կերպով հայտնվում է իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, օրինակ հաշվառվելով ոստիկանությունում, պատիժը կրելով պրոբացիոն կամ քրեակատարողական ծառայություններում:

Փորձագետներից մեկի դիտարկմամբ՝ անչափահասների հետ իրականացվող կանխարգելիչ աշխատանքի ոլորտում կարևոր առաջընթաց է նկատվում ՀՀ Կառավարության կողմից 2023 թվականի հունիսի 1-ին ընդունված N 893-Ն որոշման ընդունմամբ: Այս իրավական ակտը վերահաստատում և կարգավորում է պրոֆիլակտիկ հաշվառման ենթակա անչափահասների ցանկը, հաշվառման կարգը և դրա հիմքերը, ինչը մինչ այդ օրենսդրական մակարդակով հստակ ձևակերպված չէր:

Մինչև այս որոշման ընդունումը, ոստիկանության աշխատանքը իրականցվում էր դեռևս 1998 թ. օգոստոսի 8-ին Ներքին գործերի նախարարի կողմից տրված հրահանգի հիման վրա, որը ժամանակի ընթացքում չէր համապատասխանում արդի իրավական և պրակտիկ պահանջներին:

Փորձագետի գնահատմամբ՝ նոր իրավական կարգավորումը զգալի ներդրում է կատարում հանցագործությունների կանխարգելման և վերականգնողական աշխատանքի հասցեականության, իրավաչափության և համակարգվածության ուղղությամբ, քանի որ այն սահմանում է հստակ չափանիշներ՝ թե որ դեպքերում, ում և ինչպես պետք է ընդգրկել պրոֆիլակտիկ հաշվառման մեջ, ինչը նպաստում է ոլորտում ավելի նպատակային և արդյունավետ միջամտություններին:

Գծապատկեր 4.

Պետության կողմից ձեռնարկվելիք քայլերը անչափահաս իրավախախտների սոցիալական վերականգնման համար ըստ հարցվողների



Ըստ հարցվողների, պետությունը, առաջին հերթին պետք է ստեղծի հասարակությունում անվտանգության և վստահության մթնոլորտ (32.2%), ինչը կենսական նշանակություն ունի բնակչության՝ հատկապես անչափահասների համար: Մյուս կարևոր քայլը ընտանիքներին աջակցությունն է (26.6%), ինչպես նաև սոցիալական ծրագրերի իրականացումն ու ֆինանսավորումը (17.1%), որոնք կօգնեն աջակցել անչափահասներին և նրանց ընտանիքներին:

Փորձագետների կարծիքով, Հայաստանում սոցիալական աջակցության ծառայությունների հասանելիությունը, հատկապես մարզերում, շարունակում է մնալ սահմանափակ: Չնայած որոշ բարեփոխումներին, ծառայությունները հիմնականում կենտրոնացած են մայրաքաղաքում, իսկ մարզերում դրանց ընդգրկվածությունն ու որակը զգալիորեն զիջում են:

Աղյուսակ 1.

Անչափահաս դատապարտվածների թվաքանակը ըստ մարզերի և տարիների

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Ք.Երևան	54	30	24	39	37	32	36	41	30	11	14	5	5	7
Արագածոտն	5	4	-	3	2	-	1	8	2	-	2	-	3	-
Արարատ	13	8	12	9	6	2	3	7	7	5	5	4	2	-
Արմավիր	11	4	3	5	10	3	4	3	9	3	7	1	-	-
Գեղարքունիք	26	9	2	2	3	5	5	4	3	3	2	2	3	1
Լոռի	30	14	17	9	5	12	9	4	6	7	9	4	7	3
Կոտայք	13	11	4	5	10	16	14	5	5	8	6	2	9	1
Շիրակ	13	9	10	6	4	2	6	15	6	4	4	2	-	-
Սյունիք	2	12	5	4	4	3	4	5	2	1	4	2	5	1
Վայոց ձոր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Տավուշ	9	9	10	1	6	5	1	4	-	4	-	4	-	1
Ընդամենը ՀՀ	176	110	87	83	87	80	83	96	70	46	53	26	34	14

ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները ցույց են տալիս, որ 2010-2023 թթ. ընթացքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը Հայաստանում զգալիորեն նվազել է՝ 176-ից հասնելով 14-ի: Ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են Երևանում, սակայն այստեղ ևս նկատվում է կայուն նվազման միտում: Անչափահաս դատապարտվածների թիվը Երևանում համեմատած ՀՀ մարզերի բարձր է, ինչը պայմանավորված է բնակչության մեծ թվաքանակով, սակայն սոցիալական աջակցության ծառայությունները մեծամասամբ կենտրոնացված են մայրաքաղաքում: Չնայած այդ ծառայությունների առկայությանը, ինստիտուցիոնալ գործունեության և վերահսկողության բացակայությունը խոչընդոտում է դրանց արդյունավետությանը: Սա ընդգծում է մարզերում սոցիալական աջակցության համակարգում գործընկերության և համագործակցության ինստիտուցիոնալացման կարևորությունը, ինչպես նաև ծառայությունների հասանելիության անհրաժեշտությունը ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

Մասնագետները մատնանշում են, որ մարզերում սոցիալական աշխատողների ու հոգեբանների

www.ardaradatutyunjournal.com

պակասը, ինչպես նաև ծառայությունների ոչ բավարար ֆինանսավորումը, խոչընդոտում են անչափահասների արդյունավետ վերականգնմանը: Աջակցությունը հաճախ տրամադրվում է միայն այն ժամանակ, երբ իրավախախտումն արդեն արձանագրվել է, մինչդեռ կանխարգելիչ աշխատանքները դեռևս անբավարար են:

Փորձագետի խոսքից տիպական մեջբերում. «Բնակչության իրազեկվածությունը ցածր է. շատ ընտանիքներ չեն դիմում սոցիալական ծառայությունների, քանի որ պարզապես տեղյակ չեն իրենց իրավունքների մասին կամ չեն ընկալում հոգեբանական աջակցության կարևորությունը»:

Ըստ փորձագետների, համակարգի բարելավման համար անհրաժեշտ է մասնագետների թվի ավելացում մարզերում, ծառայությունների հասանելիության ընդլայնում համայնքային մակարդակում և ակտիվ իրազեկման աշխատանքներ՝ ապահովելով անչափահասների վաղաժամ աջակցությունը:

Փորձագետների կարծիքով, անչափահասների վերականգնման փուլում պետական և հասարակական կառույցների միջև համագործակցություն առկա է, ինչը դրսևորվում է ՀԿ-ների ներգրավմամբ ՔԿՀ և Պրոբացիոն ծառայությունների շահառուների համար նախատեսված ծառայությունների մատուցման գործընթացում: Սակայն մտահոգիչ է այն հանգամանքը, որ այս ծրագրերի մեծ մասն իրականացվում է գրանտային հիմունքներով, ինչը նշանակում է, որ առանց կայուն ֆինանսավորման դրանց շարունակականությունը հարցականի տակ է: Այս անորոշությունը կարող է լրջորեն ազդել վերականգնողական աշխատանքի երկարաժամկետ արդյունավետության վրա:

Համագործակցություն առկա է նաև Արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, որը իրականացնում է դասընթացներ ոչ միայն Քրեակատարողական և Պրոբացիոն ծառայությունների շահառուների, այլև համակարգում աշխատող մասնագետների համար:

Ոստիկանության ներկայացուցիչները ևս փաստում են համագործակցության առկայությունը, մասնավորապես՝ անչափահաս իրավախախտների ծնողներին համայնքային ցերեկային կենտրոններ ուղղորդելու և դպրոցների հետ համագործակցելու տեսանկյունից: Աշակերտների հետ պարբերաբար անցկացվող այցերը ևս կարևոր են կանխարգելման գործում, սակայն համակարգային մոտեցման բացակայության պայմաններում դրանց արդյունավետությունը սահմանափակ է:

Ընդհանուր առմամբ, փորձագետները նշում են, որ թեև համագործակցության առանձին դրսևորումներ առկա են, համակարգված և երկարաժամկետ ռազմավարության, ինչպես նաև կայուն ֆինանսավորման բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ անչափահասների վերականգնման և սոցիալական ներառման վրա:

Փորձագետների կարծիքով, հասարակության վերաբերմունքը անչափահաս իրավախախտների նկատմամբ հիմնականում բացասական է, ինչը դրսևորվում է պիտակավորման, մերժման և կասկածամտության տեսքով: Հաճախ անչափահաս իրավախախտները դիտարկվում են որպես «անցանկալի» և նրանց հնարավորություն չի տրվում վերաինտեգրվել հասարակության մեջ: Այս երևույթը հատկապես ընդգծվում է կրթական հաստատություններում, որտեղ նրանց նկատմամբ դրսևորվում են բացասական կանխակալ կարծիքներ, ինչն էլ էլ ավելի է բարդացնում վերջիններիս սոցիալական վերականգնումը:

Գծապատկեր 5.

Իրավախախտ անչափահասների նկատմամբ հասարակության հանդուրժողականության և աջակցության դրսևորումն ըստ հարցվողների

Ինչպես երևում է գծապատկեր 7-ում հարցվողների կարծիքով հասարակությունը հիմնականում հանդուրժող և աջակցող վերաբերմունք չի ցուցաբերում անչափահաս իրավախախտների նկատմամբ՝ 61,8%: Մինչդեռ վերջիններս պատրաստակամություն են հայտնում մասնակցելու համայնքում իրականացվող այնպիսի միջոցառումներին, որոնք նպատակ ունեն նպաստելու նրանց սոցիալական վերականգնմանն ու վերաինտեգրմանը: Այս իրավիճակում նկատվում է դիրքորոշման և վարքի միջև հակասություն: Չնայած այն հանգամանքին, որ հասարակությունը կարևորում է աջակցող միջավայրի առկայությունը, և հաճախ նշում է իր մասնակցության պատրաստակամությունը, այս

վերաբերմունքը գործնականում չի արտահայտվում: Բացի այդ, մարդիկ հաճախ անտեղյակ են համայնքում գործող այն կազմակերպություններից, որոնք առաջարկում են համապատասխան ծառայություններ, ինչն ի ցույց է դնում ինչպես այդ կառույցների գործունեության անբավարար հրապարակայնությունը, այնպես էլ՝ հասարակության ընդհանուր անտարբերությունը տվյալ հարցի նկատմամբ:

Ըստ փորձագետների պիտակավորումը կարող է երկարաժամկետ բացասական ազդեցություն ունենալ: Երբ անչափահասին շարունակաբար հիշեցնում են իր անցյալի սխալները, նա սկսում է ինքն իրեն նույնացնել հանցավոր կերպարի հետ, ինչը մեծացնում է կրկնահանցագործության ռիսկը: Վերջիններս նշում են, որ այս երևույթը հատկապես սրվում է փոքր համայնքներում, որտեղ տեղեկությունները արագ տարածվում են, և անձի սոցիալական դերը ձևավորվում է հանրային ընկալումների հիման վրա:

Փորձագետի խոսքից տիպական մեջբերում. «Հասարակության դերը անչափահասների սոցիալական վերականգնման և իրավախախտումների կանխարգելման գործում պետք է հիմնվի ներառականության և աջակցության սկզբունքների վրա»:

Կանխարգելման արդյունավետ մեխանիզմներից է համայնքային ներգրավվածությունը, երբ հասարակության անդամները՝ կրթական հաստատությունները, աշխատաշուկան, սոցիալական ծառայությունները և ընտանիքները, համատեղ աջակցում են ռիսկային խմբում գտնվող անչափահասներին: Հասարակության աջակցող դերի բացակայության դեպքում պետության ջանքերը լիարժեք արդյունք չեն ապահովում, քանի որ վերասոցիալականացման գործընթացն ամբողջովին պայմանավորված է այն միջավայրով, որտեղ հայտնվում է անչափահասը պատժի կամ վերականգնողական ծրագրերի ավարտից հետո:

Հասարակության նախատրամադրվածությունը կարելի է փոխել՝ վերասոցիալականացման գաղափարի հանրայնացմամբ, իրազեկման արշավների կազմակերպմամբ և անչափահաս իրավախախտներին ուղղված ծրագրերի նկատմամբ դրական օրակարգի ձևավորմամբ: Կարևոր է նաև մեդիայի դերը, որը պետք է խուսափի քրեական ենթամշակույթի ռոմանտիզացված ներկայացումից և նպաստի հասարակության վերանայված մոտեցումների ձևավորմանը՝ ներկայացնելով վերականգնված անչափահասների հաջողության պատմությունները, ընդգծելով, որ յուրաքանչյուր անհատ արժանի է երկրորդ հնարավորության:

Փորձագետների կարծիքով, առանց հասարակության վերաբերմունքի փոփոխության, կանխարգելման և վերականգնման ջանքերը կարող են մնալ ձևական և երկարաժամկետ ազդեցություն չունենալ: Հասարակությունը պետք է կարողանա անչափահաս իրավախախտին ընկալել ոչ միայն որպես խախտում կատարած անձ, այլև որպես վերականգնման և աջակցության կարիք ունեցող երիտասարդ, ով կարող է դառնալ լիարժեք հասարակության անդամ:

Փորձագետների գնահատմամբ, գործող սոցիալ-վերականգնողական ծառայությունները դեռևս թերի են և հաճախ կենտրոնացած են միայն խոցելի խմբերին նվազագույն աջակցություն տրամադրելու վրա: Ծառայությունների բարելավման ուղղությամբ անհրաժեշտ է ստեղծել անհատականացված վերականգնողական ծրագրեր, որոնք կներառեն սոցիալ-հոգեբանական աջակցություն, կրթական վերապատրաստում, մասնագիտական ուսուցում և երկարաժամկետ սոցիալական վերահսկողություն: Կարևոր է նաև համայնքային ինտեգրման ամրապնդումը՝ ապահովելով կամավորության և աշխատանքի հնարավորություններ:

Հանրապետության մարզերում սոցիալական ծրագրերի հասանելիությունը հաճախ անհամաչափ է, ինչը պայմանավորված է մարդկային և նյութական ռեսուրսների կենտրոնացմամբ մայրաքաղաքում: Հավասարաչափ բաշխման համար առաջնահերթ է ուժեղացնել ՏԻՄ-երի դերը՝ նրանց ընձեռելով ավելի լայն լիազորություններ և ֆինանսական աջակցություն: Պետք է ներդնել համայնքային սոցիալական աշխատողների ցանց, ովքեր անմիջականորեն կաշխատեն ռիսկային խմբերի հետ: Կարևոր է նաև մարզերում գործող կազմակերպությունների կարողությունների զարգացումը՝ վերապատրաստման ծրագրերի, փորձի փոխանակման և ինստիտուցիոնալ աջակցության միջոցով:

Եզրակացություն

Այսպիսով, ընդհանրացնելով հետազոտության արդյունքների վերլուծությունը, կարող ենք ասել, որ անչափահասների հանցավորության կանխարգելման և վերասոցիալականացման գործընթացում շարունակում են առկա մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնք են.

- անչափահասների հետ աշխատանքը սկսվում է այն պահից, երբ վերջիններս հայտվում են իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, այս դեպքում կանխարգելման աշխատանքների բացակայությունը հող է պատրաստում իրավախախտումների թվի աճի համար,
- դպրոցի, իրավապահ մարմինների, պետական և հասարակական կառույցների համագործակցությունն ընդգծվում է որպես թերի՝ հատկա-

www.ardaradatutyunjournal.com

պես մարզային բնակավայրերում, որտեղ սոցիալական և վերականգնողական ծառայությունների հասանելիությունը սահմանափակ է,

• իրավախախտ անչափահասների նկատմամբ հասարակության կողմից ձևավորվող դրական վերաբերմունքը, թեև արտահայտվում է խոսքային մակարդակով հանդուրժողականության և ըմբռնման դրսևորումներով, շատ հաճախ չի վերածվում իրական գործնական աջակցող վարքագծի: Նման իրավիճակում ձևավորվում է վերաբերմունքի և վարքի միջև անհամապատասխանություն, որն իր հերթին հանգեցնում է նրան, որ անչափահաս իրավախախտները շարունակում են ընկալվել որպես վտանգ ներկայացնող խումբ: Այդ ընկալումը պահպանում է պիտակավորման մեխանիզմները և սոցիալական վախի դրսևորումները՝ խոչընդոտելով նրանց ներգրավումը հասարակական կյանքում, մերժման զգացում է առաջացնում և արգելակում վերասոցիալականացմանն ու լիարժեք ինտեգրմանը նպաստող գործընթացները: Միևնույն ժամանակ, թե՛ փորձագետների, թե՛ հանրության կարծիքը հուշում են, որ անհրաժեշտ է վերանայել պետական քաղաքականությունը, ուժեղացնել համայնքային ծառայությունները և ձևավորել ավելի հանդուրժող հանրային վերաբերմունք: Այս ամենը կարևորվում է ինչպես կանխարգելման, այնպես էլ սոցիալական վերականգնման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Ելնելով վերոնշյալ եզրակացություններից, առաջարկում ենք.

1. Ինստիտուցիոնալ համագործակցության զարգացում. ռախուսել ընտանիքի, դպրոցի, իրավապահ մարմինների, ՊՈԱԿ-ների, ՀԿ-ների և համայնքային կառույցների միջև համակարգված համագործակցությունը՝ կանխարգելման և վերականգնման ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով:

2. Կանխարգելիչ ծրագրերի իրականացում կրթական հաստատություններում. Ստեղծել և ներդնել վաղ միջամտության ծրագրեր դպրոցներում՝ նպատակ ունենալով ժամանակին հայտնաբերել ռիսկային վարքագիծ ունեցող անչափահասներին և կազմակերպել համապատասխան սոցիալական աջակցության միջոցառումներ:

3. Սոցիալական ծառայությունների հասանելիության ընդլայնում մարզերում. Զարգացնել մարզերում սոցիալական վերականգնման ծրագրերի հասանելիությունը՝ ապահովելով համաչափ ռեսուրսների բաշխում քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև:

4. Հանրային իրազեկման ծրագրերի իրականացում. Կազմակերպել քարոզարշավներ և հանրային իրազեկման ծրագրեր՝ ուղղված հասարակության մոտ անչափահաս իրավախախտների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը և նրանց վերաինտեգրման գործընթացին աջակցությանը:

5. Անչափահաս իրավախախտի վերասոցիալականացման և սոցիալական հարմարման հարցերի առնչությամբ օրենսդրական բազայի կատարելագործում. Այս բաղադրիչը պետք է իրենում հստակ ներառի տարբեր նախարարությունների (ԱՆ, ԿԳՄՍ, ԱՍՀՆ) և գերատեսչությունների միջև պարտականությունների բաժանումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «ՀՀ օրենքը պրոբացիայի մասին»:
https://www.arlis.am/hy/acts/105914 ընդունված է 17.05.2016թ., վերջին այցելություն՝ 20.09.2025,
2. «ՀՀ օրենքը քրեակատարողական ծառայության մասին»:
https://www.arlis.am/documentview.aspx?docID=55538 ընդունված է 08.07.2005թ., վերջին այցելություն՝ 20.09.2025,
3. ՀՀ վիճակագրական կոմիտե:
https://www.armstat.am/am/ վերջին այցելություն՝ 15.09.2025,
4. Պրոբացիայի ծառայության նպատակներն ու խնդիրները:
https://www.moj.am/structures/view/structure/36 վերջին այցելություն՝ 20.09.2025,
5. Брижак З. И., Волочай С. Н. Характеристика преступлений несовершеннолетних и её значение для повышения эффективности расследования. “Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство: право и управление”, 2011, № 1 (7), стр. 100-103.

Мария Бунатян
Уголовно-исправительная служба Министерства юстиции РА.
Социальный работник по контракту

Анаит Джиджан
Доцент кафедры социологии и социальной работы Армянского
государственного педагогического университета,
кандидат философских наук

РЕЗЮМЕ
Профилактика и реабилитация: опыт Армении в работе с несовершеннолетними правонарушителями

В данной статье исследуются проблемы профилактики правонарушений несовершеннолетних и их социальной реабилитации в Армении. Цель исследования заключается в выявлении мероприятий, направленных на предотвращение правонарушений среди несовершеннолетних и социальную реабилитацию несовершеннолетних правонарушителей, а также проблем, возникающих в процессе их реализации.

Методологическую основу составляет комплексный подход, включающий анализ статистических данных, экспертные интервью и анкетные опросы. Данные были получены из официальной статистики, а также из интервью с практическими работниками и разработчиками политики.

Результаты показывают, что основными причинами правонарушений несовершеннолетних являются семейная запущенность, социально-экономические трудности, ограниченные образовательные возможности, нехватка поддержки со стороны общины и романтизация криминальной субкультуры. В то же время особое значение придается комплексным социальным программам, образовательным и культурным инициативам, а также роли семьи и общины в процессах профилактики и реабилитации.

В заключение отмечается, что эффективная профилактика правонарушений несовершеннолетних возможна только в условиях системного сотрудничества, сочетающего образовательные, социальные, психологические и правовые меры.

Ключевые слова: Армения, правонарушения несовершеннолетних, профилактика, социальная реабилитация, социальная поддержка, межведомственное сотрудничество.

Maria Bunatyan
Criminal-executive Service of the Ministry of Justice of the RA.
Contractual Social Worker

Anahit Jijyan
Associate Professor, Department of Sociology and
Social Work Armenian State Pedagogical University,
PhD of Philosophical Sciences

SUMMARY
Preventation and rehabilitation: Armenia's experiance in working with juvenile offendersperience

This article examines the issues of juvenile delinquency prevention and social rehabilitation in Armenia. The aim of the study is to identify measures aimed at preventing juvenile delinquency and ensuring the social rehabilitation of juvenile offenders, as well as the challenges encountered during their implementation.

The methodological basis of the research is a combined approach, including statistical data analysis, expert interviews, and questionnaire surveys. The data were obtained from official statistics, as well as from interviews with practitioners and policy makers.

The results show that the main causes of juvenile delinquency are family neglect, socio-economic difficulties, limited educational opportunities, lack of community support, and the romanticization of criminal subculture. At the same time, the importance of comprehensive social programs, educational and cultural initiatives, as well as the role of family and community in the processes of prevention and rehabilitation, is emphasized.

It is concluded that effective prevention of juvenile delinquency is possible only under conditions of systemic cooperation, combining educational, social, psychological, and legal interventions.

Key words: Armenia, juvenile delinquency, prevention, social rehabilitation, social support, interagency cooperation.

Ընդունվել է տպագրության 26.12.25թ.